Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1061-21.12.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՎ ՉՎՆԱՍԱԶԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ (այսուհետ՝ վտանգավոր բեռներ) փոխադրելու բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու սկզբունքները, ինչպես նաև վտանգավոր բեռներ առաքողի, փոխադրողի և ստացողի (այսուհետ՝ վտանգավոր բեռներ փոխադրող սուբյեկտների) իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

ՀՈԴՎԱԾ 2. ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու գործունեություն կազմակերպող և (կամ) իրականացնող, ինչպես նաև վտանգավոր բեռներ փոխադրելու հետ կապված ծառայություններ մատուցող բոլոր սուբյեկտների վրա:
2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում, եթե ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրումն իրականացվում է այն կազմակերպության տարածքում, որտեղ կատարվում է դրանց արտադրությունը, մշակումը, պահպանումը, օգտագործումը կամ ոչնչացումը, և փոխադրումները չեն իրականացվում ընդհանուր օգտագործման ճանապարհներով:
3. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում զինված ուժերին, ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության մարմիններին պատկանող տրանսպորտային միջոցներով իրականացվող վտանգավոր բեռների փոխադրումների վրա:

ՀՈԴՎԱԾ 3. ՕՐԵՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) Վտանգավոր բեռ՝ վտանգավոր նյութ, հումք, վտանգավոր թափոններ, որոնք փոխադրման ընթացքում իրենց յուրահատկությունների հետևանքով կարող են վնաս պատճառել մարդկանց կյանքին և առողջությանը, առաջացնել շրջակա միջավայրի աղտոտում և վնասել տրանսպորտային միջոցները <u>կամ շենքերն ու շինությունները,</u>

2) Վտանգավոր բեռ փոխադրող՝ վտանգավոր բեռը փոխադրելու համապատասխան թույլտվություն ունեցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իրականացնում է վտանգավոր բեռի փոխադրումը,

3) Վտանգավոր բեռի փոխադրում՝ արտադրության կամ պահպանման վայրից (սկզբնակետ) նշանակման վայր (վերջնակետ) վտանգավոր բեռների փոխադրման հետ կապված գործունեություն, որն ընդգրկում է վտանգավոր բեռի, դրա տարաների, տրանսպորտային միջոցների, բեռի ընդունման, փոխադրման, հանձնման գործողությունների իրականացման, ինչպես նաև փոխադրման բոլոր փուլերում բեռի կարճաժամկետ պահպանման հետ կապված աշխատանքները,

4) Փոխադրման երթուղի՝ վտանգավոր բեռի փոխադրման սկզբնակետից մինչև վերջնակետ տրանսպորտային միջոցների շարժման համար հաստատված ուղեգիծ, որը ներառում է դրանց կայանման վայրերը և լիցքավորման կետերը,

5) Վտանգավոր բեռը ստացող՝ փոխադրման փաստաթղթերում նշված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը լիազորված է ստանալու իր անունով ուղարկված (առաքված) վտանգավոր բեռը,

<u>6) Վտանգավոր բեռ փոխադրող ավտոտրանսպորտային միջոց՝ բեռնատար ավտոտրանսպորտային միջոց, որը արտադրող գործարանի կողմից նախատեսված է կամ փոխադրողի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերասարքավորված է տվյալ տիպի վտանգավոր բեռի փոխադրման համար,</u>

7) Վթարային քարտ՝ վտանգավոր բեռի հատկությունների և դրա փոխադրման ժամանակ առաջացող վթարների կամ միջադեպերի և դրանց հետևանքների վերացման գործողությունների սահմանված նմուշի փաստաթուղթ, որը լրացվում է բեռնառաքողի կողմից և բեռի հետ միասին տրամադրվում փոխադրողին: Վթարային քարտին ներկայացվող պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից,

8) Բեռնառաքող՝ փոխադրման փաստաթղթերում նշված անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, որը նախապատրաստում, փաթեթավորում և առաքում է վտանգավոր բեռը,

9) Չվնասազերծված տարա՝ վտանգավոր բեռներ փոխադրելու և պահելու համար նախատեսված տարաներ, կոնտեյներներ, անոթներ, ցիստերներ, որոնք վտանգավոր բեռը բեռնաթափելուց հետո չեն անցել մաքրում, ախտահանում, վարակազերծում կամ ակտիվազերծում:

ՀՈԴՎԱԾ 4. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, <<Տրանսպորտի մասին>>, <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>>, <<Թափոնների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներից, սույն օրենքից եւ այլ իրավական ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ԳԼՈՒԽ 2
ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 5. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1) էկոլոգիական, ռադիացիոն և հակահրդեհային անվտանգության, մարդկանց կյանքի ու առողջության պահպանման և ֆիզիկական պաշտպանության, աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և անվտանգ երթևեկության պահանջների գերակայությունը.

2) վտանգավոր բեռների փոխադրումների պայմանների նկատմամբ պետական վերահսկողության ապահովումը:

ՀՈԴՎԱԾ 6. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառի պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը,

2) վտանգավոր բեռների փոխադրումներին վերաբերող աշխատանքների և ծառայությունների չափանիշների, ստանդարտների, նորմերի, կանոնների, պահանջների նկատմամբ պետական վերահսկողության սահմանումը և իրականացումը,

3) վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում անվտանգության պետական կարգավորման ու կառավարման նպատակով պետական կառավարման մարմինների գործունեության համակարգումը,

4) վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառի միջազգային համագործակցությունը:

ԳԼՈՒԽ 3
ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 7. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) իրականացնում է պետական քաղաքականությունը.

2) սահմանում է ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման թույլտվությունների տրամադրման կարգը.

3) սահմանում է ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրումներին ներկայացվող պահանջները.

4) սահմանում է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները.

5) ապահովում է վտանգավոր բեռների փոխադրումների միջպետական համագործակցությունը.

6) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 8. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը՝

1) մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը .

2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.

3) իր լիազորությունների սահմաններում հսկողություն է իրականացնում վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում փոխադրման և անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջների կատարման նկատմամբ.

4) վտանգավոր բեռներ փոխադրելու համար տալիս է թույլտվություն, իսկ մարդու համար ախտածին 1-2 խմբերի միկրոօրգանիզմներ փոխադրելու դեպքում՝ ստանալով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը.

5) Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համաձայնեցնում է վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղին, եթե երթուղին անցնում է Երևան քաղաքի վարչական տարածքով՝ նաև Երևանի քաղաքապետի հետ.

6) ապահովում է փոխտեղեկատվությունը շահագրգիռ այլ գերատեսչությունների և կառույցների հետ.

7) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 9. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝

1) մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը

2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.

3) հսկողություն է իրականացնում վտանգավոր բեռների փոխադրումների ընթացքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նկատմամբ և ձեռնարկում օրենքով նախատեսված միջոցներ.

4) վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ վտանգավոր բեռ փոխադրողի կողմից գրավոր դիմում ներկայացնելու դեպքում իրականացնում է վտանգավոր բեռի ուղեկցումը անվտանգ երթևեկությունը ապահովելու նպատակով .

5) տալիս է համաձայնություն վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղու վերաբերյալ.

6) մասնակցում է վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ առաջացած վթարների վերացման միջոցառումներին.

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 10. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրման բնագավառում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը՝

1) մասնակցում է վտանգավոր բեռների փոխադրման անվտանգության ապահովման պետական քաղաքականության իրականացմանը,

2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր

3) վտանգավոր բեռների փոխադրման ժամանակ առաջացած վթարների դեպքում իրականացնում է բնակչության և տարածքների պաշտպանությանը, վթարների վերացմանն ուղղված աշխատանքներ,

4) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 11. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների լիազորություններն են՝

1) առողջապահության բնագավառում՝

ա. մասնակցություն վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ առաջացած վթարների հետևանքների վերացման միջոցառումներին.

բ. մարդու համար ախտածին 1-2 խմբերի միկրոօրգանիզմներ փոխադրելու դեպքում համաձայնության տրամադրում.

գ. վտանգավոր բեռների բացասական ներգործությունից մարդու առողջության պաշտպանության միջոցառումների գերակա ուղղությունների մշակում և վտանգավոր բեռների փոխադրման նկատմամբ սանիտարահիգիենիկ պահանջների սահմանում.

դ. իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2) բնապահպանության բնագավառում՝

հսկողություն է իրականացնում վտանգավոր բեռների փոխադրման ընթացքում բնապահպանական բնագավառի օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ:

ԳԼՈՒԽ 4.
ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 12. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ԲԵՌՆԱՌԱՔՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բեռնառաքողն իրավունք ունի՝

1) արտադրողից պահանջել ներկայացնել տեղեկատվություն փոխադրման ենթակա վտանգավոր բեռների վերաբերյալ,

2) վտանգավոր բեռները փոխանցել փոխադրողին՝ սահմանված կարգով այն փոխադրելու համար,

3) հրաժարվել փոխադրողի կողմից տրամադրված տվյալ վտանգավոր բեռների փոխադրման համար չնախատեսված ավտոտրանսպորտային միջոցից:

2. Բեռնառաքողը պարտավոր է՝

1) փոխադրողին տրամադրել վտանգավոր բեռները՝ դրանց ծագման և յուրահատկությունների վերաբերյալ համապատասխան փաստաթղթերով,

2) ապահովել վտանգավոր բեռների նախապատրաստումը փոխադրման համար, դրանք փոխադրողին հանձնել դրանց անվտանգ փոխադրումն ապահովող համապատասխան տարաներում, կոնտեյներում, ցիստեռնում կամ փաթեթավորմամբ:

3) իր գործունեության ընթացքում ապահովել աշխատանքային օրենսդրության պահանջների կատարումը:

ՀՈԴՎԱԾ 13. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Փոխադրողն իրավունք ունի՝

1) հրաժարվել վտանգավոր բեռների փոխադրումից, եթե հայտնաբերում է տվյալ վտանգավոր բեռի փաստաթղթերով սահմանված պահանջների խախտումներ կամ անհամապատասխանություն,

2) ստանալ հատուցում բեռնառաքողի կամ բեռը ստացողի մեղքով պատճառված վնասի դիմաց:

2. Փոխադրողը պարտավոր է՝

1) փոխադրելու համար ընդունել վտանգավոր բեռները,

2) տրամադրել տվյալ վտանգավոր բեռների փոխադրման համար նախատեսված և (կամ) համապատասխան կահավորված սարքին ավտոտրանսպորտային միջոցներ,

3) վտանգավոր բեռները նշանակման վայր հասցնել պայմանագրով նախատեսված ժամկետներում, իսկ այդպիսի ժամկետների բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում,

4) ապահովել վտանգավոր բեռների փոխադրման անվտանգությունը՝ փոխադրման ընթացքում վթարային իրավիճակների առաջացումը կանխելու, իսկ վթարների դեպքում՝ դրանց հետևանքները վերացնելու նպատակով,

5) անհրաժեշտության դեպքում փոխադրման ժամանակ ապահովել վտանգավոր բեռների ֆիզիկական պաշտպանությունը, պահպանումը և ուղեկցումը,

6) վտանգավոր բեռներ փոխադրող ավտոտրանսպորտային միջոցը, փոխադրման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները համապատասխանեցնել անվտանգության, սանիտարական օրենսդրության և շրջակա միջավայրի պահպանության պահանջներին,

7) իր գործունեության ընթացքում ապահովել աշխատանքային օրենսդրության պահանջների կատարումը.

8) մշակել և սույն օրենքի 8-րդ հոդվածում նշված համապատասխան մարմնին ներկայացնել վտանգավոր բեռների փոխադրման երթուղին: Փոխադրման ամբողջ ընթացքում չշեղվել փոխադրման երթուղուց, պահպանել անվտանգ երթևեկության պահանջները, անընդհատ հսկողության տակ պահել ավտոտրանսպորտային միջոցի և վտանգավոր բեռների վիճակը,

9) բեռնման և բեռնաթափման աշխատանքների ժամանակ բեռնող և բեռնաթափող անձնակազմին ապահովել անհատական պատպանիչ միջոցներով, աշխատանքների ավարտից հետո իրականացնելով դրանց վարակազերծումը կամ ոչնչացումը: Վտանգավոր բեռների փոխադրումից հետո կատարել դատարկ տարայի մաքրում և վարակազերծում:

ԳԼՈՒԽ 5.
ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 14. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՒՄԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրումների ֆիզիկական պաշտպանության և անվտանգության ապահովման նպատակով ուղեկցող անձնակազմի ընտրության և հրահանգավորման, բժշկական զննության անցկացման պատասխանատվությունը կրում է վտանգավոր բեռ փոխադրողը:

2. Փոխադրման ընթացքում ուղեկցող անձնակազմը՝

1) պետք է ապահովի փոխադրման ամբողջ ընթացքում վտանգավոր բեռների ուղեկցումը, դրանց անվտանգության պահանջների պահպանումը, սպասարկող անձնակազմի և ավտոտրանսպորտային միջոցների անվտանգությունը,

2) վտանգավոր բեռի փոխադրումից առաջ պետք է անցնի վտանգավոր բեռի փոխադրման և միջադեպերի հետևանքների վերացման համար հրահանգավորում,

3) պետք է անցնի բժշկական զննություն,

4) փոխադրման սկզբում պետք է ստուգի վտանգավոր բեռների արտաքին վիճակը՝ դրանց ճիշտ փաթեթավորումը, պիտակավորումների և դրոշմակնքման պահպանվածությունը,

5) միջադեպերի և վթարների դեպքում վթարային քարտի պահանջներին համապատասխան ձեռնարկի միջադեպերի հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումներ:

ՀՈԴՎԱԾ 15. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների բեռնման և բեռնաթափման աշխատանքների հսկման պատասխանատվությունը կրում է բեռնառաքողի կամ բեռը ստացողի ներկայացուցիչը հանդիսացող պատասխանատու անձը, որն ուղեկցում է բեռը:

2. Վտանգավոր բեռների փոխադրումների ժամանակ բեռնող և բեռնաթափող անձնակազմը՝

1) պետք է անցնի հրահանգավորում այդ տեսակի վտանգավոր բեռների հետ վարվելու անվտանգության պահանջներին համապատասխան,

2) պետք է հետևի պիտակներով և նախազգուշացնող նշաններով նշված պահանջների պահպանմանը,

3) բեռնման և բեռնաթափման աշխատանքների ժամանակ առաջացած միջադեպերի դեպքում վթարային քարտի պահանջներին համապատասխան ձեռնարկի միջոցառումներ միջադեպերի հետևանքների վերացման համար,

4) բեռնման և բեռնաթափման աշխատանքների ավարտից հետո կատարի աշխատանքային հագուստի մաքրում և վարակազերծում:

3. Վտանգավոր բեռներ փոխադրող ավտոտրանսպորտային միջոցների վարորդները՝

1) բեռի փոխադրման ընթացքում պետք է պահպանեն սույն օրենքի, ինչպես նաև ճանապարհային երթևեկության բնագավառի օրենսդրության պահանջները,

2) պետք է անցնեն հրահանգավորում այդ տեսակի վտանգավոր բեռների հետ վարվելու անվտանգության պահանջներին համապատասխան,

3) յուրաքանչյուր երթից առաջ պետք է անցնեն բժշկական զննություն,

4) միջադեպերի առաջացման դեպքում պետք է աջակցեն միջադեպի պատճառների վերացմանը,

5) պետք է ապահովեն <<Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին>> Եվրոպական համաձայնագրի պահանջները:

ՀՈԴՎԱԾ 16. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1. Վտանգավոր բեռների միջպետական փոխադրումներն իրականացվում են սույն օրենքի, այլ նորմատիվ իրավական ակտերի և Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերի պահանջների հիման վրա:

ԳԼՈՒԽ 6.
ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

ՀՈԴՎԱԾ 17. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Վտանգավոր բեռների փոխադրումներում ներգրավված անձանց կյանքը և առողջությունը ենթակա է պարտադիր ապահովագրության դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 18. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Վտանգավոր բեռներ փոխադրելու ընթացքում առաջացած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2. Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման դեպքում իրավաբանական և ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

3. Սույն օրենքով սահմանված պարտականությունները խախտող վտանգավոր բեռներ փոխադրող սուբյեկտները պարտավոր են Հայաստանի Հանրապետությանը հատուցել իրենց մեղքով պատճառված վնասը:

ԳԼՈՒԽ 7
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 19. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին>>
ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առարկությունների և առաջարկությունների

N	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	ՀՀ ԱԺ պատգամավոր Հերմինե Նաղդալյան	1. 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում լրացնել <<շենք-շինությունները>> բառերը, քանի որ կարող են վնասվել ոչ միայն տրանսպորտային միջոցները, այլև շենք-շինությունները	Ընդունվել է, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերջում լրացվել են <<կամ շենքերն ու շինությունները>> բառեր:
		2. 3-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել <<վտանգավոր բեռ փոխադրող տրանսպորտային միջոց>> հասկացությունը	Ընդունվել է, 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր 6-րդ կետով:
		3. 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել <<ֆիզիկական անձ>> բառերը	Ընդունվել է, <<ֆիզիկական անձ>> բառերը հանվել են